

## «ԵՍ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՀԱՏ ՄԸՆ ԵՄ» (ԶԱՀՐԱՏԻ «ԴԴՈՒՄԻ ՀԱՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ)

Բ. գ. ք., դոց. Վ. ՓԻՆՈՅԱՆ

Երբ ընթերցողը հրաժեշտ է տալիս իր Բանաստեղծին կյանքի երկրային այս հանգրվանում, դժվար է դառնում ակնկալել, թե պիտի գտնի նորը, անհայտը, անսպասելի, անտեսանելի, թե իր ճամփին նորիցնոր կհանդիպի իր Բանաստեղծին՝ նոր գույն ու գրով, նոր խոսք ու լույսով: Բայց հանդիպումը դառնում է տոն, դառնում է «հոգու կիրակի»: Թերևս այս զգացողությունն են ունեցել նրանք, ովքեր 1915-ին Դ. Վարուժանին կորցնելուց հետո 1921-ին «Հացին երզն» են ունեցել իրենց ոգու սեղանին: 2007-ի փետրվարի 21-ից՝ Ջահրատի երկրային կյանքի ավարտից հետո ինձ համար նման տոն է եղել 2009-ի փետրվարը, երբ հայտնի դարձավ, որ հրատարակվել է քերթողի ևս մեկ՝ իններորդ բանաստեղծական ժողովածուն՝ «**Դդումի համ**»<sup>1</sup>: Իսկ այս գրքում Ջահրատը քերթված ունի՝ «Այս», որ ուղերձ է մեզ.

Անունի մը ետին տուն-տեղ են եղեր  
Թեպետ աննշան – բայց իմ բերդս է այս

Մերթ քայլամուկոր կամ մերթ ամսայթաք  
Բայց միշտ դէպի վերջ խաղաղ երթս է այս

Դանդաղ – որ տեւէ համը դեռ երկար  
Իմ կարկանդակիս վերջին շերտն է այս

Մենք հերթով կու գանք հերթով կը մեկնինք  
Կողմնորոշուելու դժուար հերթն է այս

Մի ըսէք Ջահրատ թէ օր չտեսար  
Առէք կարդացէք – անտիպ թերթս է այս (էջ 31):

Մերը չի ընդունում որևէ պայմանականություն, որևէ բայց, և այս իրողության առհավատչյան է «Դդումի համ» քերթվածը, երբ առտնինի, ամենասովորականի

<sup>1</sup> Ջահրատ, Դդումի համ, «Արաս» հրատարակչություն, Ստանպուլ, 2009: Այս գրքից մեջբերված քերթվածների էջերը նշվում են շարադրանքի մեջ: Հաշվի առնելով հայրենիքում այս ժողովածուի սահմանափակ լինելը՝ փորձել ենք քերթվածները մեջբերել ամբողջական: Նշենք, որ այս ժողովածուի 11 քերթվածներ մինչ այս հրատարակվել են Այդին Մորիկյանի կազմած «Բառ բառի քով» (Ե., 2007) ժողովածուի մեջ:

մեջ անգամ կարողանում է գտնել անկրկնելին, ինչը միաժամ նաև անսպասելի է:

Անկրկնելիությունը դրսևորվում է ժամանակի մեջ, ինչը նկատում ենք «**Ծովը հոն պիտի չըլլայ**» քերթվածում, ուր հանգուցային երկու բառ կա՝ **անտեսանելին** և **անսպասելին**: Անտեսանելին դիտելու, ապա և անսպասելիին սպասելու մեկօրյա ընթացքում (գիշեր-առաւօտ-գիշեր) մոյճական չի մնում ոչինչ. փոխվում է ամեն ինչ, և դրսևորվում է իրոք **անտեսանելին** ու **անսպասելին**.

Այս գիշեր

Պիտի ծովափը նստինք

ու ժամերով

ժամերով

Պիտի դիտենք անտեսանելին

Առաւօտուն

Դուն հոն – ես հոս –

զատ զատ

Պիտի սպասենք

անսպասելիին

Գիշերը

Նորէն պիտի իջնենք ծովափ

Բայց ծովը հոն պիտի չըլլայ (էջ 12):

Սպասելու, դիտելու ընթացքը որպէս վարիացիա է դրսևորվում «**Փապու-դիին մէջէն**» բանաստեղծության մեջ, ուր մետամորֆոզի ու պարադոքսի միջոցով Ձահրատն ստեղծում է յուրահատուկ մի կառույց: Եթե «Ծովը հոն պիտի չըլլայ» քերթվածում ժամանակի միջոցով է տարածության մեջ փոփոխություն դրսևորվում, ապա այստեղ տարածության մեջ դրևորված կերպափոխությունը ոչ միայն արտաքուստ է, այլ նաև ներքուստ: Կերպափոխության հետ նաև էափոխություն է տեղ գտնում նրա գործում.

Կը սպասենք –

կը դիտենք անոնք որ

խումբ խումբ դուրս կ'ելլեն –

Ըսել է

Նոյն թափով կ'աշխատի փապուդին

Տարօրինակ փապուդի մըն է – մէջէն

Մարդ մարդ կը մտնէ – աւանակ կ'ելլէ

Աւանակը կը մտնէ – մարդ կը դառնայ

Կը յիշենք մենք ալ անցանք հոնկէ

Կը յիշենք – կամ չենք յիշեր

(Ծանօթ.)

Կը յիշենք եթէ աւանակ էինք – մարդ դարձանք

Չենք յիշեր եթէ մարդ էինք – աւանակ դարձանք) (էջ 13):

Զահրատի պոեզիայում շատ հաճախ հակադրությունը վերածվում է պարադոքսի, և ելակետն ու վերջակետը, լինելով բանաստեղծական կառույցի ծայրակետեր, միևնույն ժամանակ նաև ասելիքի ծայրաբևեռներ են՝ ծնված մեկմեկուց: Բանաստեղծության կառուցման զահրատյան այս սկզբունքը հաճախադեպ է («Երախտապարտ», «Ալարիլ» և այլն) և երբեմն ունենում է ապշեցուցիչ արդյունք՝ հաստատելով ճշմարտությունը.

Ապրիլ – կը նշանակէ

ամեն օր

Նոր նոր մեղքեր գործել

Կը նշանակէ

նորանոր մեղքեր

բարդել հիմին վրայ

սակայն երեւիլ սուրբի պէս անբիծ

մինչ ներքնապէս մեղքերու

կուտակումին տակ կթիլ

Ապրիլ – կը նշանակէ անմեղ ձեւանալ

մեղաւորներու աշխարհի մը մէջ («Նշանակութիւն», էջ 16):

Փաստորեն պարադոքսը գիտակցվում է որպէս հանգուցալուծում՝ միաժամանակ իրականանալով որպէս քերթվածի կառուցվածքը ձևավորող գործոն: Պարադոքսը մի դեպքում դրսևորվում է ժամանակի մեջ, մեկ այլ դեպքում՝ տարածության, մի երրորդ դեպքում՝ գործողության (շարժման) մեջ: Առանձին դեպքերում էլ (ինչպէս վերը մեջբերված «Նշանակութիւն» քերթվածում) պարադոքսը գիտակցվում է որպէս արդյունք:

Եվ պարադոքսին էլ հաջորդում է քերթված-աբսուրդը, որ թերևս ամենից նախընտրելին է Զահրատի մոտ, որ ընթերցողի համար է աբսուրդ, բայց ոչ հեղինակի, քանի որ որոնման և գյուտի ընթացքում ավելի հաճախ նա չի բավարարվում առտնինի մակարդակով: Բանաստեղծություն կառուցելու զահրատյան մյուս նախասիրությունը կարելի է դիտարկել քերթված-ասացվածքը, երբ խտացած

ծնակերպումը որևէ դատարկ տեղ չի թողնում, դառնում է ամբողջական ու անփոփոխելի:

Ամեն քերթուած

առանց խաչի

առանց քարի

խաչքար է<sup>1</sup>:

Կամ «**Ծնրաչորք**» քերթվածը.

Յամակարգիչս փոքր է - ծունկի վրայ

Կապույտ փէշդ կարճ է - ծունկի վրայ

Տաղը աղօթք է - կարդա ծունկի վրայ (էջ 93):

Յաջորդ յուրահատկությունը քերթված-նորավեպն է: Նորավեպի բառարանային բնութագրումները՝ «բնորոշ առանձնահատկություններից են անսովոր սյուժեն, սուր բախումը, գործողության արագ զարգացումը և անսպասելի, կտրուկ վախճանը»<sup>2</sup>, կամ՝ «մարդու կյանքի համեմատաբար ավարտուն դրվագ, գործողության արագ զարգացում և անսպասելի ավարտ»<sup>3</sup>, թերևս այս դեպքում լիարժեք ու ամբողջական չեն, քանզի կարող ենք հավելել ևս մեկ-երկու հատկանիշ.

ա. «անսպասելի, կտրուկ վախճան» (ավարտ), որը, սակայն, ակնարկվում է նախադրության մեջ (օր.՝ Գր. Ջոհրապի «Ջաբուղոն» նորավեպի նախադրության մեջ հիշատակվում է. «Ամենէն աւելի ամուր փակուած դուռը, ամենէն բարձր պատը՝ մտնելէ չեն արգիլեր զինքը. բանալիին ծակէն, տախտակներուն ճեղքերէն ներս կը սպրդի կարծես, անշշուկ ստուերի մը պէս: <...> դռնփակ միստերը իրեն համար չեն. իրեն համար պատրաստուած ծուղակներուն մէջէն յաջողութեամբ դուրս կ'ելլէ միշտ, վարպետ ձեռնածուխի մը պէս զարմանքի մէջ թողլով բռնելու պատրաստուող միամիտները:

<...> երկաթագործի քով աշկերտութենէ եկած էր ու կղպանքներու արուեստը պէտք եղածէն աւելի սորված էր»<sup>4</sup>: Սա այն իրողությունն է, որ նորավեպի վերջում գիտակցվում է որպէս հիշատակված նախապայման. «Եւ գիշեր մը կը յաջողի վերջապէս. խոհանոցին ծխնելոյզին մէջէն վեր կ'ելլէ նախ ու յետոյ հիանալի ճարտարութեամբ մը այդ ցից բարձրութենէն վար կ'իջնէ, այս անգամ բանտին շրջափակէն դուրս:

Երեք տարուան մէջ այս վեցերորդ փորձը կը յաջողի ահա <...>»<sup>5</sup>):

բ. Նորավեպին բնորոշ է երկակի ավարտը, երբ առաջին ավարտը նախա-

<sup>1</sup> Ջահրատ, Առանց խաչի առանց քարի խաչքար, Ե., 1998, էջ 186:

<sup>2</sup> Էդ. Ջրբաշյան, Գ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Ե., 1980, էջ 222-223:

<sup>3</sup> Մ. Սանթրոյան, Գրականագիտական բառարան, Ե., 2009, էջ 182:

<sup>4</sup> Գրիգոր Ջօհրապ, Երկերի ժողովածու չորս հատորով (տպագրվել է վեց հատոր), հտ. Ա, Ե., 2001, էջ 280-281:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 285:

պատրաստում ու կանխորոշում է երկրորդը: Առաջին ավարտը ձևավորվում է կյանքի ու գեղարվեստական պայմանականության տրամաբանությամբ, երկրորդ ավարտը՝ հոգու և հոգեկանի պարտադրանքով, որ ծնվում է կյանքից, բայց և հերքում է կյանքի գետնաքարշը կամ առտնինը՝ հաստատելով անսովորը ամենասովորականի մեջ:

Գոնե նաև այս երկու իրողությունն են հավելվում Ջահրատի ձևակերպած քերթված-նորավեպերում ինչպես նախորդած ստեղծագործության մեջ, այնպես էլ «Դոլունի համ» հավաքածուում: Ջորջիմակ.

Կից մը տուր –  
Թող երթայ հոն ուրկէ եկաւ  
Եթէ փայլուն  
ասուպի մը հանդիպիս

Եկած է քու միապաղաղ  
խաղաղ կեանքդ  
անկարելի ցոլքերով տակն ու վրայ ընելու

Կից մը տուր  
Թող երթայ հոն ուրկէ եկաւ  
Դարձիր քեզի ու դուն քեզի  
դուն քեզի

Բարի եկար մը ըստ – («**Ասուպ մը ծամբուղ վրայ**», էջ 141):

Քերթված-նորավեպը նույնպես հաճախադեպ է Ջահրատի ստեղծագործության մեջ: «Դոլունի համ» ժողովածուում էլ հանդիպում ենք նմանատիպ երեք գործերի՝ «**Վիօլեթ**», «**Սանթրոհինի իշուկը**», «**Սպիտակ թռչունը**»՝ հեղինակի կողմից առանձնացված հենց որպես «պատմուածքներ»: Սրանցով Ջահրատը հաստատում է, որ տիրապետում է էպիքական աստիճանական պատումի գաղտնիքների, գրական երկի ճարտարապետությանը:

Առանձին անդրադարձի է արժանի Ջահրատի «**Սանթրոհինի իշուկը**» երկը (էջ 110-117), որ ըստ էության մի կյանքի պատմություն է, մեկ համընդգրկուն ճակատագիր՝ ներկայացված առանձին պատկերներով: Այս ճակատագիրը ունիվերսալ է և կարող է ընդհանրության եզրեր ունենալ թերևս յուրաքանչյուրի դեպքում կամ վերաբերմամբ:

Ելակետը Սանթրոհինի իշուկի՝ նոր գործի պատրաստ լինելն է: Ջահրատն ուրվագծում է իշուկի կենսատարածքը՝

– կղզին զառիվեր –

ու երբ վերեն նայուեր

ծով ու երկինք ամեն ինչ դրախտաման:

Ախոռապան Ալեքոյի խնամած երիտասարդ իշուկի գործը զբոսաշրջիկներին զբոսաշրջելն է, ինչը չի խանգարում ապրել նաև իր ներքուստ կյանք ու երազանքներով ու ապրածին ակամա հակադրվելով.

Իշուկը

ուրախ զուարթ կը բարձրանար

դարձդարձիկ ճամբայէն –

Չոտը եւ երբեմն ալ հպումը կը զգար

գոյգ մը հոլանի սրունքի

– կը մտաբերեր փտռի էգ էշերը –

Անոնք պարզապէս էշ կը հոտէին –

– Գոնէ ձի հոտէին – կը խորհրդածեր

Սանկ երիտասարդ էգ ձի մը ըլլար

– ո՞ւր է –

Իշուկը նոր նոր մեծցեր – էշ էր եղեր –

Չպարտ ու պաշտօնական

կը քալէր բարձունքն ի վեր

– կեանքն ի վեր –

Բայց երբեմն ինքն իրեն

կը հարցնէր թէ

Ի՞նչու համար էշ է

փոխանակ իշապան ըլլալու:

Ձուգահեռ գոյություններ են դառնում իշուկի ապրածն ու զգայնություն-մտածումները: Եթե մի դեպքում արտաքուստ է ներկայացվում նրա կյանքը («էշ ըլլալ – միշտ զագաթ բարձրանալ ու տեսարանին դիմաց անտարբեր մնալ»), ապա ներքուստ էլ բանաձևվում են իշուկի մտքերը («հոն ուր կեանք մը կը վերջանայ հարկաւ նոր կեանք մը կը սկսի») և կերպարանք առած բնագղմերը.

Երիտասարդ էր – յոգնիլ չէր գիտեր –

Բայց ի՞նչու շրջապատը էգ ձիեր չկային

Այս գնացքով

արդեօք ջորիի մը հայր պիտի կարենա՞ր ըլլալ –

Ու նորեն գիշեր կ'ըլլար

քունը կը տաներ

Երազի մէջ ջորիներ

Շուրջը կը դառնային

հայրիկ հայրիկ ըսելէն:

Ձահրատի բարի ժպիտն է անընդհատ ալիքվում: Եվ երբ նոր պաշտոնի են կարգում նրան («Կղզիի քահանային էջը կարգեցին»), փոխվում է նաև իշուկի ապրածի ինքնագնահատությունը.

Ու բազմութեան մէջ

պաշտօնական ու հանդիսաւոր

կը քալէր էջը

զլուխը ճօճելէն աջ ու ձախ –

Շատեր կը պարծենային

թէ քահանային էջը իրենց նայեցաւ:

Ախոռապան Ալեքոյի մահից հետո էջն էլ կարող է մարդկայնորեն ցավակից լինել, սգերգել Ալեքոյի համար.

Յուզուած էր - արցունքը վազեց խոշոր շիթերով

խոշոր աչքերէն

Ներսէն երբ մեռելաթաղի երգեր

կ'արձագանգէին

Ինք ալ փորձեց ընկերանալ անոնց

սկսաւ երգել

- Աս ու ան ժամ առաջ լռեցուցին զինք

- Չգիտցաւ թէ ինչու –

Մինչդեռ ինք փափաքեցաւ

Վերջին յարգանք մը մատուցանել

Ալեքոյին:

Ալեքոյին հաջորդում է որդին՝ Եօրկոն, որ երիտասարդ է, բայց ծերացել է էջը («Ու զինքը հանգստեան կոչեցին այլեւս»), և արդեն աններդաշն են նրանց հարաբերությունները, բեռ է էջը, անցել են «երբեմնի փառքի օրերը», և գալու է վերջանալու առիթը.

Եօրկոն տեսաւ զինքը

– առիթ է ըսաւ ասկէ փրկուելու –

թեթեւ մը հրեց

էջը զլորեցաւ անդունդն ի վար

վերջին անգամ մըն ալ նայեցաւ ախոռին

նայեցաւ զուարճացող զբոսաշրջիկներուն

նայեցաւ Եօրկոյին

Իր վերջին խօսքը եղաւ – անձայն –  
 Եօրկիմու – Եօրկաքիմու –  
 Եաթի՞ – Ի՞նչու:

Սանթորիմի իշուկի մահով չի ավարտվելու ընդհանրապես էջի կյանքի վերելքն ու վայրէջքը: Ունիվերսալ այս կերպարը բացահայտում է իր հարազատութիւն-ազգակցութիւնը Զր. Մաթևոսյանի Ալխոյի հետ: Ու թե այնքանք, որ այս իշուկի, Ալխոյի կերպարների հիմքում ենթադրվում է ու կա միֆական ելակետ՝ Սիզիփոսը (ինչը մեր համոզումն է, և առիթ ենք ունեցել այդ մասին խոսելու), ապա սրանով իսկ կարող ենք ենթադրել Ջահրատի գեղարվեստական մտածողության կապը նախնական, ելակետային արքետիպերի հետ:

Զարկ է շեշտելով հիշատակել, որ Ջահրատի ստեղծագործությունը եսակենտրոն չէ, այլ մարդակենտրոն: Եվ սրանից զատ հեղինակը ժամանակի ու աշխարհի ցավը տեսնելու և արկված նյարդերով այդ ամենն ապրելու կարողությունն ու կամեցողությունն ունի: «Ջուրը պատէն վեր» հավաքածուի «Փլատակներ» քերթվածն է այդ վկայում, իսկ այս ժողովածուն էլ վերջակետվում է Զրանտ Դիմքին նվիրված «**Աղանակերա**» երկով, որի ժանրային յուրահատկությունը թերևս չկարողանանք ճշտել:

Աղանիները համոզեցին, ըսին որ իրենց վրայ  
 չեն կրակեր. Զրանտ հաւատաց: Թեպէտ երկչոտ՝  
 հաւատաց թէ աղանի մըն է:

Բայց կրակեցին:

Նախատեսած էր, մէկ քանի տարի առաջ ըսած էր ինձի.

«Իմ մահը պիտի ըլլայ ոտքի վրայ՝ կանգնած, ոչ թէ պառկած՝  
 անկողինի մէջ»:

Թող պառկի լոյսերու մէջ:

Եթէ մեզի հարցնէք, ան միշտ յաղթական պիտի կանգնի՝  
 անաղարտ արձանի մը պէս (էջ 147):

Սրանից հետո ենք ցանկանում բարձրաձայնել հետևյալ կարծիքը. «**Սպիտակ թռչունը**» վերնագրված շարքը (էջ 118-126), որ Ջահրատն անվանել է պատմվածք, ամենայն հավանականությամբ նույնպես նվիրված է Զրանտ Դիմքին, և այս շարքում տեղ են գտել այլաբանությունն ու այլասացությունը: Սա է հուշվում Զրանտ Դիմքի ապրածի, նրա մտորումների և «Սպիտակ թռչունը» շարքի պատկերային համակարգի ու ասելիքի զուգահեռումից: Շարքում նաև՝ մեր օրերի Թուրքիայի պատկերն ենք տեսնում, ուր համատարած բռնության դեմ թեկուզ փոքրիկ, բայց ընդդիմություն կա (ճշմարտության խորհրդանիշ սպիտակ թռչունը), որ արգելափակվում է.



<...>

Ամենքով որոշուեցաւ պատժել  
Բոլոր անոնք որ կ'անաստեն օրէնքին  
Եւ սպիտակ թռչուն մը կը պահեն

Ուստի արգելափակուեցան  
բոլոր անոնք որ  
սպիտակ թռչուն մը  
պահեցին – կը պահեն – կամ պիտի պահեն –  
Այն ատեն  
սպիտակ թռչունները խմբովին ապաստանեցան  
բանտին մօտ կանանչ պուրակին մէջ

<...>

Բանտված տերերին փոխարինելու են գալիս և նրանց համար երգուն են թռչունները.

Թռչունները սպիտակ երգեր  
կ'երգէին պուրակին մէջ  
Բայց օր մըն ալ անդրադարձան  
թէ իրենց երգերը կը զարնուին պատերուն  
ու չեն թափանցեր պատերէն ներս

Տխուր ու անտէր  
լռեցին:

Ինչքան էլ փորձի Ջահրատը կոնկրետ ժամանակի «հետքերը ջնջել, դրանք դրսևորվում են՝ «մատնելով» գրության կոնկրետ ժամանակը.

Սպիտակ թռչունը թառ մը կը փնտռէր  
Ճախ քան որ **դարը փոխուէր**

Ու լռէր անախորժ ծայրը ինքնակոչ:

Թվում է՝ ելք չկա, և հեղինակը չի կարողանալու դուրս գալ իր իսկ ձևակերպած կրկնակի ճնշումից (տերերը արգելափակվեցին, և անտեր թռչունները լռեցին): Բայց Ջահրատը ձևակերպում է անկման երրորդ պարունակը.

Մինչ – նոր կարգադրութեամբ –  
Ամէն անձ

իր անձրեւը իր հետ պարտէր բերել  
– իսկ անոնք որ անձրեւ չունին

կամ ունին

Բայց իրենց անձրեւը չեն բերած  
պիտի արգելուէին իրենց ձեռքերը լուալէ  
պիտի կտրուէին անոնց աղտոտ ճկոյթները  
ու բանտը աղբանոցը նետուէին:

Թռչունները գիտեն այդ մասին, թռչունները «քաջ էին – խմած հաւատքի  
ջուրէն// իրենց կտուցներուն մէջ// կը պահէին// եւ ամէն գիշեր// այդ ջուրով կ'օծէին  
տանիքը բանտին»:

Չի պատճառաբանվում այն հրաշքը, որ կարող է լինել, երբ նոր նվազներ են  
հնչում, նոր գովազդներ ու դրոշներ են ծածանվում, երբ բացվում են բանտերի  
դռները, և «ամէն թռչուն եկաւ իր տէրը գտաւ»:

Եթէ Ձահրատը հաճախ է խոսում անցավորի, հարափոփոխի մասին («Ծովը  
հոն պիտի չըլլայ», «Միօրինակութիւն»), ապա խոսում է նաև անդառնալիի մա-  
սին, և «Սպիտակ թռչունը» պատմվածք-շարքի հանգուցալուծումը դառնում է  
իրապէս ողբերգական, բայց և լավատեսորեն վեհ.

Ամէն ոք ուրախ էր

եւ խանդավառ

Բայց սպիտակ թռչուն մը – միակը –

զուր տեղ փնտռեց իր տերը

բազմութեան մէջ

Բազմութեան մէջ

անկին մը ծուարած

ճկոյթը կտրած

իր տէրը ճանցչաւ սպիտակ թռչունը

Եւ ձեռք ձեռքի սկսան ճախրել

«Սպիտակ Թռչուններու Պուրակ»ին վերել

Դէպի ապագայ:

Լավատեսութիւն, թե՞ հավատ պետք է տեսնել նաև երկի էպիլոգում.

Սպիտակ թռչունները միշտ պիտի ապրին –

Մենք պիտի կորսուինք

պատմութեան էջերուն մէջ

Սպիտակ թռչուն մը պիտի գայ անպատճառ

մեզ ճամբելու:

Շարքը հավակնում է հաստատելու, որ Յրանտ Դինք աղավանակերպ թռչունը  
կա և ապրում է նաև մեր ժամանակի մէջ:

«Վիճակ»-ը կյանքից առնված, բայց արտուրդի պայմանականությամբ ձևակերպված ոչ թե պատմվածք, այլ էլեգիկ պատում է իր երեք գործող անձերով՝ Վիճակ, Այլին և Վարդան Սկրտիչեան: Երկը կարելի է պատկերացնել որպես լիարժեք կինոսցենար, և այս դեպքում ներկայացվելիք պատկերաշարը ավելի ընդգրկուն կարող է ներկայանալ: Կերպարների միջև ենթադրելի (կամ ոչ ենթադրելի) կապի բացահայտմամբ, կերպարների աստիճանական զարգացմամբ տեսնում ենք այսօրվա դիմագծությունը, որ հաստատապես նման է երեկվա ու վաղվա այսօրներին: Այս իմաստով Ջահրատի քերթողությունը չի տեղավորվում մեզ ծանոթ որևէ գեղարվեստական ուղղության կամ ստեղծագործական մեթոդի մեջ. այն հարևանություն է անում և՛ էքզիստենցիալիզմի, և՛ սյուրռեալիզմի, և՛ ավանդական ու մոդեռնիստական այլևայլ ուղղությունների հետ: Թերևս ճշմարիտ կլինի ձևակերպել, որ Ջահրատի քերթողությունը համադրական արվեստի արտահայտություն է, առաջնորդվում է ոչ թե ստեղծագործական ուղղությամբ կամ իմաստասիրական որևէ հոսանքով, այլ իրականության բավիղներից ինքզինքն ապավինած ելնելու կարողությամբ: Ջահրատը գյուտի՝ բանաստեղծ է, նրան չի բավարարում բանաձևված ճշմարտությունը, այլ անհրաժեշտ է նորագյուտ և նորատես ճշմարտության բանաձևումը:

XX-XXI դարերի մեծակության բարդությոն կա Ջահրատի ստեղծագործության մեջ, թերևս ճշտենք՝ ոչ թե մեծակության, ոչ թե հասարակությունից օտարվելու, այլ հասարակության մեջ ինքն իրենից օտարվելու բարդությոն, ինքնության կամ սեփական ես-ի կորստից հետո ոչ թե այսօրից փախուստ տալու, այլ ինքն իրեն փնտրել-գտնելու ձգտումը: Մարսել Պրուստի, Ֆրանց Կաֆկայի, Կոբո Աբեի, այլոց մոտ դրսևորված այս խնդիրը եթե բացահայտ չէ ներկայացված մեր գրականության մեջ, ապա այս հանգամանքը դեռ դրա բացառումը չէ: Եվ Ջահրատի մոտ այն դառնում է բարձրաձայնված փաստ ու կայացած գեղարվեստական միավոր՝ **«Սպասումներ»**.

Առաւօտուն կայան հասնիլ ճիշդ ժամուն

Բայց յապաղած շոգեկառքին սպասել

Բազմութեան մէջ ոտքի մնալ – չորս աչքով

Սպասել որ նստելիք տեղ մը բացուի

Երեկոյեան վերջին զանգին հեշտալուր

Սպասել լուռ – համբերել լուռ – ճիտը ծուռ –

Ետ գալ – հոն ուր ինքը իրեն կը սպասէ

Ինքնամոռաց կարօտի մը հրայրքով

Սպասել որ աներեւոյթ ձեռք մը գայ  
Ու նորոգէ գինիին շիշը պարապ

Կանուխ պառկիլ այդ գիշեր ալ – քուն մտնել  
Եւ սպասել երազներուն յապաղած

Առաւօտուն կայան հասնիլ ճիշդ ժամուն  
Եւ անվրէպ շոգեկառքին սպասել

Քազմութեան մէջ ոտքի մնալ – չորս աչքով  
Սպասել որ փախուստի դուռ մը բացուի - (էջ 34):

Շրջապտույտի միօրինակությունը, սակայն, կործանում չէ, այլ ծնուն է սպասումներ: Եթե առաջին յոթ սպասումները այդ միօրինակության հաստատումն են, ապա ութերորդը՝ բացառումը, ինչը հաստատում է, որ «ամենայն ինչ ընդունայն չէ»: Այդ վերջինը փախուստ է կեցության ձևավորված կամ պարտադրված վիճակից, քաղաքակրթության աղճատումից, որի արդյունքում դիմակավորվում է ես-ը, կորսվում, դառնում միադիմի, միօրինակ: Ի դեպ, «**Միօրինակ**» վերնագրված քերթված ևս կա, որ ասես «Սպասումներ»-ի պարողիան լինի.

Անցուդարձ տեղ է –

ինք կեցեր

անցնողին – դարձողին

կը հարցնէ

– այսօր ժամը քանի՞ն է –

Ոմանք կը պատասխանեն –

– Երէկ ալ այս էր ժամը – կ'ըսէ

ու կ'եզրակացնէ

թէ բան չէ փոխուած

աշխարհիս վրայ –

Եւ թէ կեանքը որքան ճշգրիտ է

ժամացոյցի պէս (էջ 23):

Պահի, դիպվածի, ակնթաթի անկրկնելիությունը կա Ձահրատի ստեղծագործության մեջ, և սա գալիս է մարդուն անկրկնելի տեսնելու զահրատյան նախասիրությունից: Ամենասովորականի մեջ անսովորը գտնելու, բացահայտելու կարողությունը յուրահատուկ հրապույր է բերում նրա քերթողությամբ՝ հաստատելով Ձահրատի ինքնատիպությունը:

Երբեմն հանիրավի Ձահրատի վերաբերմամբ մշում են, թե նա ընդամենը հայերեն գրող բանաստեղծ է՝ նրան կտրելով հայոց բանաստեղծության բնականոն ընթացքից, կապելով այլոց ավանդների հետ: Սակայն սա արդյո՞ք այսպես է: Հայոց միջնադարյան քաղաքային բանաստեղծության հետ կապին ինչ-որ առիթով անդրադարձել ենք, սակայն «Դղումի համ» ժողովածուում հանդիպում ենք մի պատկերի, որ գալիս է, թերևս, հեթանոսական ժամանակներից: Ս. Խորենացուց ավանդված «Ձի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ»<sup>1</sup> պատկերի երկրորդ բաղադրիչն է ոչ պատահականորեն քանիցս կրկնվում նրա մոտ.

**Այս ձեռքերովս կ'երգեի –**

Աեր կ'երգեի սիրահարին համար երկչոտ եւ անոնց  
Որ անցեալի կիսատ սերեր ունէին այդպէս ճիտը ծուռ –  
Ու բոլորին – սիրեն թէ ոչ – տող տողի  
Քիչ մը թռիչք ու քիչ մը գոյն կու տայի

**Ձեռքերովս կ'երգեի**

Մեծութիւնը տառապանքին որ կը յածի մայթ մայթ –  
Մեծութիւնը այդ մայթերուն փոքր մարդուն անտէրունջ  
– Իր երազը կը պատմէի որ լոյս իյնայ ձեր աչքին –

**Այս ձեռքերով – իմ ձեռքերով – կ'երգեի** (էջ 102):

Առանձին և հատուկ քննության է արժանի Չարենցի և Ձահրատի ստեղծագործությունների զուգահեռման խնդիրը (ասենք՝ Չարենցի «Պոեզոգումնա»-ն ու «Ռուբայաթ» շարքը և Ձահրատի քերթողությունը), որ կբացահայտի ոչ միայն ամենչություններ, այլ նաև, որ ավելի կարևոր է, Ձահրատի նորարարությունը:

Իսկ «Սիրերգություն»-ը և «Խաղերգություն»-ը այնքան են հայեցի ու ազգային, որ ասես հեղինակը ոչ թե երկնել, այլ գրառել է ժողովրդական հանդիսանքից: Մի քանի խաղիկ.

Խաղը կայ  
Այսօրը կայ վաղը կայ  
Օր մ'ալ կեանքին – կը նայիս –  
Ոչ պղպեղ ոչ աղը կայ

Հուր ինձի  
Հուրը մարող ջուր ինձի  
Այսքան մօտեն երբ կ'անցնիս  
Գէթ բարեւ մը տուր ինձի

<sup>1</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Ե., 1981, էջ 286:

&lt;...&gt;

## Փոթորկոտ

Սէր որ կ'ըսենք վայրի խոտ

Փրցուր նորէն կը բուսնի

Յանկարծ – մինչեւ առաւօտ (էջ 48-49):

Հիշո՞ւմ եք Հ. Սահյանի քանդակը. «Ես տքնեցի համառ, // Ես տքնեցի անդուլ, // Բայց իմ տքնութիւնը // Ձուր անց կացավ: // Ես եզ էի ծնվել // Լոկ անուլի համար, // Մաճկալը եզ էր, // Չհասկացավ»<sup>1</sup>:

Հաստատապէս եզ-ը մեր ժողովրդի ապրածից է գալիս, ինչն արձանագրվել է նաև «Հորովել»-ում («Եզո ջան, ախպեր ջան») ու տեղ է գտել նաև Ջահրատի ստեղծագործության մեջ (անսպասելի՞)՝ բերելով զգացողությունների շղթա.

Եզները

որ ատենօք

արօրին կը լծէինք

հիմա

թրաքթօրները նստած

կը պտտին

տեսարժան վայրերը

Իսկ կովերը

միշտ կով են

կը շարունակեն կաթ տալ («**Եզները**», էջ 21):

Ջահրատն իր ծննդյան օրերի ալքոմուն լրացրեց ևս մեկ էջ՝ «**81**».

Ինծի այնպէս կը թուի

թէ կը լողան արգիլեալ ջուրերու մէջ

թէ պիտի

Շանաձուկ մը գլուխը հանէ ջուրէն

ու սաստէ

– Ի՞նչ գործ ունիս դուն այստեղ –

Եթէ կրնաս

Բացատրէ թէ

Ութսունէն վերջ լողալ սորվիլ

հրաշալի բան մըն է (էջ 32):

Եվ այսբանից հետո գրվեց նաև հաջորդը՝ «**Հանրաշարժեր**».

81 թիւ հանրաշարժը ճամփորդ չառաւ

<sup>1</sup> Հ. Սահյան, Քարե պատարագ, Ե., 2005, էջ 262:

Կը սպասենք 82 թիւին  
Մէկ քանի ճամբորդ կ'իջնեն  
Շարժավարը կը ձայնէ  
– Աճապարեցէք –

Անցեալի տեսարաններ  
Եկեր են կայարան  
ողջերթ մաղթելու  
– Մնաս բարով մը չկրցանք ըսել –

82 թիւ հանրաշարժը  
ճամբայ ելաւ արագ –  
Զգիտցայ թէ մէ՞ջն են թէ դուրսն են (էջ 138):

Զահրատը 83 թիվ հանրաշարժով հեռացավ՝ աստ թողնելով ավելին՝ իր սերը, քերթվածները, ոգին, լավատեսությունը, որ կենսահաստատ ու առինքնող է, երբ արձանագրում է.

Մահկանացուներ ենք մենք երջանիկ  
Կանք – պիտի ըլլանք երբ նոյնիսկ չըլլանք:

Զահրատի «Դիմումի համ» ժողովածուն հեղինակի լինելության հավաստումն է:  
Յ.Գ.

Մեր օրերում բանաստեղծության ապաբանաստեղծացումն իր հնարավոր բոլոր դրսևորումներով ձևավորում է որոշակի ըմբոստություն այդ երևույթի հանդեպ և կարոտ առ Բանաստեղծությունը: Ապաբանաստեղծություն (սա չնույնացնենք անտիպոեզիա ասվածին և ոչ էլ ինտելեկտուալ պոեզիային) է, որ դրսևորվում է ոչ թե ասելիքի (սա երբեմն նույնիսկ ավելցուկ ունի), ոչ թե ձևի ու կառուցվածքի մեջ, այլ որովհետև **Յոզե-զուրկ** է, այնինչ Զահրատի գործը հակադրվում է իր **Յոզևոր** բնույթով, ինչն էլ ի վերջո Զահրատի քերթողությունը մեզ հարազատեցնողն է:

**“Я – ЧАСТИЧКА ЭЛИКСИРА СЧАСТЬЯ”  
(СБОРНИК ЗАХРАТА “ВКУС ТЫКВЫ”)**

**ПИЛОЯН В.**

**РЕЗЮМЕ**

В посмертном сборнике армянского поэта диаспоры Захрата “Вкус тыквы” выявляются ключевые принципы творчества автора, представляются основные мотивы, восприятие жизни и неповторимость мгновения. Утверждается самобытное мышление поэта, его место в истории армянской литературы. Сборник стал значительным явлением армянской поэзии.

**A PILL OF HAPPINESS AM I  
(THE COLLECTION “THE TASTE OF PUMPKIN” BY ZHRAT)**

**V. PILOYAN**

**SUMMARY**

The collection (The Taste of the Pumpkin (published posthumously) by Zahrat, the diaspora Armenian poet, reveals the principles embracing the author's works. As well as representing the basic motives, his perception of life, and the moment's uniqueness, the collection testifies to the author's individual way of thinking, highlights his place in Armenian poetry. The collection is an eminent sample of Armenian poetry.